

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

ք. Եղեգնաձոր

«31» մարտի 2021թ., ժամը 11:00

1. «Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2021 թվականի սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ»:

Ձեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի զարգացման ծրագրերի, գրասաշրջության և վերլուծության բաժնի պետ Ա. Կոստանյան

2. «2021 թվականի համայնքային բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների առաջին եռամսյակի հավաքագրման արդյունքների մասին»:

Ձեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարգարյան

3. «Համայնքներում իրականացվող աղբահանության դիմաց գանձվող գումարների և կնքված պայմանագրերի վերաբերյալ»:

Ձեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարգարյան

4. «Համայնքներում անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրման էլեկտրոնային միասնական համակարգի ներդրման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ»:

Ձեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարգարյան

5. «Արցախի Հանրապետությունից տեղահանված և ժամանակավորապես Վայոց ձորում ապաստանած քաղաքացիներին տրամադրվող աջակցության և գործընթացում առկա խնդիրների հետ կապված հարցերի վերաբերյալ»:

Ձեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Ն. Ասատրյան

6. «2020 թվականի ձմեռային գորակոչի արդյունքների վերաբերյալ»:

Ձեկուցող՝ ՀՀ ՊՆ Ձ և ՀԶԾ ՎԶՄ տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Նահապետյան

7. «Մարզի քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ»:

Ձեկուցող՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ ՎԶՄ մարզային փրկարարական վարչության պետ Հ. Մարգարյան

8. «Սոցիալապես անապահով խավերին ցուցաբերվող օգնությունների վերաբերյալ

Ձեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Վ. Ասլանյան

Մարզխորհրդի նիստին կմասնակցեն ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալը, մարզի համայնքների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ:

Նիստին հրավիրվել են նաև մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ: